ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ: ԳՈՂԹԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

ՀՏԴ 941(479.25)

Եփրիկյան Արմինե

պ.գ.թ., դոցենտ
Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան,
Հայոց պատմության ամբիոն,
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ
Երևան, Հայաստան
Armineeprikyan@mail.ru

1919թ. ամռանը աշխարհաքաղաքական տրընթաց փոխակերպումները նոր մարտահրավերների առաջ կանգնեցրին Հայաստանի Հանրապետությանը, սրվեցին հարաբերությունները Ադրբեջանի հետ: Ադրբեջանը, բոլոր հնարավոր միջոցները կիրառելով, լայն նախապատրաստական աշխատանքներ էր տանում Զանգեզուրի ու Նախիջևանի վրա իր իշխանությունը տարածելու համար: Եթե Զանգեզուրում թաթարների սկսած շարժումն անհաջողության մատնվեց և ջախջախվեց, ապա Շարուր-Նախիջևանում դեպքերն այլ ընթացք ստացան: Այստեղ թուրքական և ադրբեջանական գործակալների օգնությամբ թշնամին ավելի պատրաստված և կազմակերպված գտնվեց, քան հայկական իշխանությունը և հայ բնակչությունը:

ՀՀ իշխանությունները, իհարկե, միջոցների դիմում էին, սակայն դրանք անվճռական, մեծամասամբ դիվանագիտական բնույթի անպտուղ քայլեր էին, որոնք առանձնապես չէին աջակցվում Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների կողմից: Բրիտանացիները արդեն շրջադարձվել էին դեպի Ադրբեջան և Վրաստան, և առանձնապես վճռական չգտնվեցին թաթարներին զսպելու խնդրում, մինչդեռ Նախիջևանում թաթարական ապստամբության նախապատրաստությունն ընթանում էր մեծ թափով:

Նախիջևանի թաթար բնակչության առաջնորդները, օգտվելով հայկական իշխանության և տեղի հայության թուլությունից ու անվճռականությունից, և ստանալով Թուրքիայի ու Ադրբեջանի գործուն աջակցությունը, 1919 թ. հուլիսին կազմակերպեցին ապստամբություն և հայկական ուժերին դուրս մղեցին երկրամասի տարածքից՝ նախիջևանահայությանը ստիպելով բռնել գաղթի ճանապարհը:

Գողթանում իրադարձությունները ստացան այլ ընթացք: Հայկական այն գյուղերը,

---

Հոդվածը ներկայացվել է 8.08.2022:
Տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Սամվել Պողոսյանը: 16.08.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 31.08.2022
* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A102 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

որոնք ապավինեցին իրենց ուժերին, դրսևորեցին համերաշխություն և կազմակերպված պաշտպանվեցին, փրկվեցին կոտորածից, իսկ մյուսները, ովքեր հանձնվեցին թշնամու ողորմածությանը՝ կոտորվեցին:

Վերոնշյալ իրադարձություններում Անդրկովկասում Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները, չնայած որոշակի ակնկալիքներին առաջին աշխարհամարտում որպես Անտանտի փոքր Դաշնակցի Հայաստանի կողմից սպասվող աջակցության հույսերին, մասնավորապես տարածքային-սահմանազատման կարևոր հարցերում կամ պասիվ չեզոք դիրք գրավեցին կամ կողմնակալ, առդրբեջանամետ դիրքորոշում, որը նպաստեց Նախիջևանում, Գողթանում և այլուր մահմեդական խաների և մահմեդական զանգվածին հակահայկական-հակապետական խռովություններին ընդդեմ Հայաստանի Հանրապետության: Արդյունքում, այս երկակի քաղաքականությունը դաշնակիցների, և մասնավորապես բրիտանական ռազմաքաղաքական առաքելության կողմից հանգեցրեց ՀՀ դիրքերի թուլացմանը տարածաշրջանում:

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Նախիջևան, Ադրբեջան, Մեծ Բրիտանիա, Գողթան, ինքնապաշտպանություն, դաշնակիցներ, խռովություն:

1919 թ. ամռանը ՀՀ ռազմաքաղաքական դրությունն էլ ավելի լարվեց: Աշխարհաքաղաքական սրընթաց փոխակերպումները նոր մարտահրավերների առաջ կանգնեցրին Հայաստանի Հանրապետությանը, սրվեցին հարաբերությունները Ադրբեջանի հետ: Ինչպես նկատում է Յ. Ղուլյանը, «Ադրբեջանը, բոլոր հնարավոր միջոցներն օգտագործելով, լայն նախապատրաստական աշխատանքներ էր տանում Զանգեզուրի ու Նախիջևանի վրա իր իշխանությունը տարածելու համար»[1]: Նախիջևանի թաթար բնակչության աաջնորդները դրանից այնքան էին ոգևորվել և սանձարձակ դարձել, որ բացահայտ ցուցադրում էին իրենց հակահայկական տրամադրությունները և հայկական իշխանությունը տապալելու ձգտումները, որոնք շատ դեպքերում խրախուսվում էին դաշնակիցների կողմից կամ վերջիններիս թողտվության հետևանքով Հայաստանին կանգնեցնում նոր բարդությունների առաջ:

Նահանգապետ Գ. Վարշամյանը 1919 թ. մայիսի վերջին ՀՀ կառավարությանը տեղեկացնում էր, որ թաթար բնակչության առաջնորդներից մեկը՝ Քերբալա Ալի խանը անգլիացիների և իր ներկայությամբ ասել է. «Նախիջևանի նկատմամբ կատարվեց մեծ անարդարություն: Նա պետք է միացվեր կամ Ադրբեջանին և կամ Պարսկաստանին, հայերդ երբեք չեք կարող կառավարել այս երկիրը: Սա լինելու է երկրորդ Մակեդոնիա և շատ շուտով դժգոհ էլեմենտները չեթաներ են կազմելու ու հարձակումներ գործելու»[12]: Գ. Վարշամյանը եզրակացնում էր. «Դրա մեջ ճշմարտություն կա և երևի այդ գործունեությանը նոքա կդիմեն»[3]: Սակայն հունիսի 25-ին ՀՀ ներքին գործերի նախարարությանն ուղարկած զեկուցագրում Գ. Վարշամյանը ժխտում էր ապստամբության հավանականությունը՝ նշելով, թե «այժմ Նախիջևանի շրջանում մասսայական ապստամբություն թուրքերի կողմից անկարելի է և անհիմն»[4]: Որոշ ժամանակ անց նա ավելացնում էր, որ «այդ բոլորը 8-10 մարդու գործ է, եթե նոցա չեզոքացնենք, ամեն

---

[1] Ղուլյան Յ., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից 1918-1920 թվականներ, էջ 258:
[2] ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 171, թ. 28 շրջ.:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, թ.16:

ինչ կհանգստանա»[1], սակայն որի կանխատեսումը այնքան էլ իրատեսական դուրս չեկավ:

Հակահայկական ապստամբության նախապատրաստման գործում կարևոր դեր էր ստանձնել Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը, որի ղեկավար Խան-Թեքինսկին փաստորեն կարողացել էր իր ձեռքը վերցնել թաթար բնակչության հակահայկական շարժումների համակարգումը և ակտիվորեն գործում էր: 1919 թ. հունիսի 4-ին Բաքու ուղարկած հեռագրով նա պահանջում էր որևէ պատճառաբանությամբ հետաձգել Հայաստանի երկաթուղիների համար մազութ ուղարկելը, ավելացնելով, որ «Նախիջևանի շրջանում դեպքեր են սպասվում»: Իսկ նույն օրը մեկ այլ հեռագրով հաղորդում էր, որ իր ձեռնարկած միջոցների շնորհիվ Շարուր-Նախիջևանը և Օրդուբադը արդեն միացել են մեկ ազգային խորհրդի մեջ, և որ ինքը վերջինիս հետ մշտական հարաբերությունների մեջ է[2]:

Հունիսի 11-ին Գ. Վարշամյանն արդեն հայտնում էր, որ Շարուր-Նախիջևանի շրջանն ունի մոտ վեց հազար կիսականոնավոր զորք՝ հեծելազորով, թնդանոթով և գնդացիրներով, որոնք իրենց մարտունակությամբ չեն զիջում հայերին, իսկ պատերազմական գործողությունների ժամանակ նրանց թիվը կարող է հասնել մինչև 10 հազարի[3]:

Հունիսի 23-ին Ադրբեջանի ներկայացուցիչը նշելով, որ տվյալ պահին Ադրբեջանը Հայաստանից բացի ուրիշ թշնամի չունի, իր կառավարությանը խորհուրդ էր տալիս, որ «Հայաստանի վրա առանձին ուշադրություն դարձնել»[4]:

Հուլիսի 14-ին, ապստամբությունից մեկ շաբաթ առաջ, Խան-Թեքինսկին հայտնում էր Բաքվին. «Սպասվում են մեծ դեպքեր ամբողջ Շարուր-Նախիջևան Օրդուբադում և Ղարսի շրջանում: Առանց մի օր կորցնելու՝ ուղարկեցեք խոշոր գումար զինվորական կազմակերպությունների համար»[5]: Թեքինսկու հանցավոր գործունեությունը խրախուսվում էր Ադրբեջանի կառավարության կողմից, որին նպաստեց նաև մասնավորապես բրիտանական ռազմաքաղաքական առաքելությունը Անդրկովկասում, որի մոտ արդեն 1919 թ. կեսերից նկատվում էր ակտիվ ադրբեջանամետություն և հայկական շահերի անտեսում, ինչը շատ դեպքերում ՀՀ կառավարության համար անսպասելի էր:

Հետաքրքիր է այն, որ ՀՀ կառավարությունը տեղյակ էր այս ծածկագիր հեռագրերի բովանդակությանը, նրանք գաղտնազերծվում էին ուղարկվելուն պես[6]: Սակայն ՀՀ իշխանությունները ցուցաբերելով հանցավոր անհոգություն, «ոչ միայն թաթարների պարագլուխներին չեզոքացնելու փորձեր չարեցին, այլև տեղյակ լինելով նախապատրաստվող ապստամբության մասին՝ վճռական ոչինչ չարեցին այն կանխելու կամ ճնշելու համար: Գողթան գավառի կոմիսար Ա. Մելիք-Մուսյանը հուլիսի 14-ին Գ. Վարշամյանին ուղարկած զեկուցագրում մանրամասն ներկայացնում էր ծրագրվող ապստամբության ուժերի, Ադրբեջանից ժամանած ղեկավարների, ֆինանսավորման, նա-

[1] Նույն տեղում, թ. 23:
[2] Նույն տեղում, թ. 23:
[3] Նույն տեղում, էջ 28:
[4] Նույն տեղում, էջ 31
[5] Նույն տեղում, էջ 32
[6] Նույն տեղում, էջ 16:

խահարձակ վայրերի վերաբերյալ: Իր ենթադրությունները կետ առ կետ հաստատելով կոնկրետ փաստերով, նա եզրակացնում էր, որ «կռիվն անխուսափելի է»[1]: Սակայն վճռական ոչ մի քայլ չկատարվեց, որին նպաստեց նաև այն հանգամանքը, որ դաշնակից երկրների ռազմական առաքելությունները բավականաչափ վճռականություն չցուցաբերեցին թաթար առաջնորդներին զսպելու գործում, իսկ ավելի շուտ շահագրգռված չէին, քանզի Ադրբեջանի հետ նրանց նավթային շահերի ներդաշնակումն ավելի կարևոր էր: Այս առումով ընդունելի չէ այն տեսակետը, թե հայկական իշխանությունները որոշակի հաջողություններ ունեին Բոյուք-Վեդու, Շարուրի և Նախիջևանի շրջանների «մահմեդական բնակչության հնազանդեցմանն ուղղված քաղաքականության հարցերում, որին էապես կարող էին նպաստել նաև հայկական հետախուզական ծառայությունների կողմից ձեռքբերված կոնկրետ փաստերը, վստահ և արդյունավետ աշխատանքը» նաև Թեքինսկու քայքայիչ-դավադիր գործունեության մեկուսացման խնդրում[2]: Հետախուզական և հակահետախուզական ծառայություններն, անշուշտ, որոշակի հաջողությունների հասել էին ադրբեջանական մեքենայությունների բացահայտման գործում, սակայն դրանք ՀՀ իշխանությունների կողմից կամ անուշադրության էին մատնվում կամ էլ՝ արագ և բավարար արձագանքի չէին արժանանում, շատ դեպքերում էլ հույսը անհիմն կերպով դնելով Անդրկովկասում գտնվող Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների վրա[3]:

Ինչևէ, նախապատրաստվող ապստամբության մեղքը հայկական իշխանությունների վրա բարդելու համար թաթար բնակչության առաջնորդները դիմեցին բավական խելամիտ և հետևողական քայլերի: Ադրբեջանական մամուլը մեծ աղմուկ բարձրացրեց թաթար բնակչության նկատմամբ իբր հայերի կողմից իրականացվող հաշվեհարդարի մասին: Բաքվի «Ադրբեջան» թերթն այնքան էր տարվել Հայաստանում մահմեդականների նկատմամբ բռնությունների կիրառման մասին կեղծ լուրեր տարածելու մոլուցքով, որ գրում էր, թե հայերը մեկ օրվա ընթացքում Նախիջևանում սպանել են 152 թուրք[4]: Այսպիսի կեղծ լուրերի տարածմանը ձայնակցում էր նաև վրացական մամուլը:

Աղմուկը բռնությունների մասին այնքան մեծացավ, որ բրիտանական հրամանատարությունը որոշեց Նախիջևան գործուղել գնդապետ Պլաուդենին՝ տեղում իրերի դրությանը ծանոթանալու համար: Հունիսի 20-ին գնդապետը երևանյան ջոկատի հրամանատար Դրոյի հետ ճանապարհվեց Նախիջևան, հանդիպեց թաթարների առաջնորդ Քերբալա խանի, ինչպես նաև նահանգապետ Վարշամյանի և հայկական զորքերի հրամանատար գեներալ Շելկովնիկյանի հետ: Ծանոթանալով իրերի դրությանը՝ գնդապետը իր ղեկավարությանը ներկայացրեց երկու մասից բաղկացած մի զեկուցագիր, որի առաջին մասում ներկայացված էին Քերբալա խանի բողոքները, իսկ երկրորդում՝ հայերի բացատրությունները: Ըստ Քերբալա խանի շինծու տեղեկատվության՝ հայերը բռնագրավել էին թաթարների սեփականությունը, խուզարկել էին նրանց տնե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թթ. 114-115:

[2] Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), էջ 87: Vanik Virabyan, Revealing The Khan Tekinsky Conspiracy (from the history of counter intelligence of the First Republic of Armenia), Fundamental Armenology, № 1 (13), 2021, pp. 51-81:

[3] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 159-160 և այլն:

[4] Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները», էջ 128:

ը, նրանցից բռնագրավել էին զենքը: Նա նաև նշում էր, թե իբր հայկական զորքը և միլիցիան մահմեդականների նկատմամբ դրսևորել են անհարգալից վերաբերմունք:

Հայկական կողմը համոզիչ փաստերով ցույց տվեց, որ մասնավոր սեփականության յուրացում չի կատարվել, իսկ ռեկվիզիցիայի ենթարկվել է միմիայն ռուսական պետական գույքը: Ինչ վերաբերում է խուզարկություններին, ապա այն դիպվածային բնույթ է կրել, կատարվել է միայն զենքի խուզարկություն: Բացի այդ, հայերը խոստացան խուզարկություններ այլևս չկատարել ու միջոցներ ձեռնարկել 5-րդ կետում մատնանշված դրությունը շտկելու համար: Վարշամյանը և Շելկովնիկյանը առաջ քաշեցին նաև հետևյալ պայմանները զենքի հարցում. «ա) բոլոր ատրճանակները պետք է գրանցվեն, բ) ոչ ոք, բացի զինվորներից, զենք կրելու իրավունք չունի, գ) բոլոր զենք կրողները պետք է ձերբակալվեն ոստիկանության կողմից, դ) ձերբակալվածի զենքը պետք է բռնագրավվի»[1]:

Ուշագրավ է, որ զեկուցագրում Պլաուդենը խոսում էր նաև այն մասին, որ Ենգիջա և ԲաշՆորաշեն գյուղերը հայտարարել են Հայաստանի կառավարությանը ենթարկվելու իրենց ցանկության և թուրքական քարոզչության դադարեցման անհրաժեշտության մասին, ապա ավելացնում, որ ինքը հրամայել է հեռացնել թուրք ասկյարներին Նախիջևանից, իսկ մերժելու դեպքում հավաքել կանանց, երեխաներին և գնդակոծել այն գյուղը, որտեղ սպանել են հայ սպային և զինվորներին, որի դրսևորած քիչ թե շատ տրամադրվածությունը առաջ բերեց ադրբեջանցիների դժգոհությունը, որից ելնելով նրա վերադաս հրամանատարությունը միջոցներ ձեռք առավ, խորհուրդ տալով Պլաուդենին ձեռնպահ մնալ համանման վերաբերմունքից: Ընդ որում Թեքինսկին հուլիսի 16-ի հեռագրով իր կառավարությանը դժգոհել էր Պլաուդենի հայերի օգտին գործելուց, անգլիացիների վարքագիծը համարելով վրդովեցուցիչ, որն էլ հարկադրեց սեփական շահերից ելնելով գեներել Կորիին սաստել Պլաուդենին[2]:

Եվ այդուհանդերձ, Ադրբեջանը դիմեց ավելի նախահարձակ գործողությունների, Հայկական բռնությունների մասին Ադրբեջանի, Նախիջևանի, ընդհանրապես իսլամական աշխարհի բարձրացրած աղմուկի կապակցությամբ Հայաստանի կառավարությունը ստիպված եղավ նաև մի հատուկ հաղորդագրություն հրապարակել Վրաստանում իր դիվանագիտական միսիայի տեղեկատու բյուրոյի միջոցով, որում ժխտում էր տարածված կեղծ հաղորդագրությունները[3]:

Հայտարարության մեջ խոսվում էր նաև թաթարների կողմից հայերի նկատմամբ գործադրված բռնությունների, Նեհրամ, Վեդի և մի շարք այլ վայրերում հայերի սպանությունների, «մահմեդական ազգաբնակչության շարժումը դրսից լայնորեն նախապատրաստված լինելու» մասին և այլն:

Բնականաբար այս հայտարարությունը դեպքերի հետագա ընթացքի վրա ազդել չէր կարող: Իսկ Հայաստանի թաթար բնակչությունը թուրք-ադրբեջանական գործակալների գլխավորությամբ տենդորեն նախապատրաստվում էր հակահայկական ապստամբության:

Հայկական իշխանությունները, իհարկե, միջոցների դիմում էին, սակայն դրանք

---

[1]ՀԱԱ, ֆ. 200. g. 1, գ. 358, թ. 36:

[2] Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920, Ер., Нац. Архив Армении, 2012, с. 175:

[3]«Աշխատավոր», Երևան, 1919, 26 հուլիսի:

անվճռական, մեծամասամբ դիվանագիտական բնույթի անպտուղ քայլեր էին, որոնք առանձնապես չէին աջակցվում Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների կողմից: Հայաստանի կառավարությունը դեռևս հունիսի 18-ին Թիֆլիսում իր դիվանագիտական ներկայացուցչի միջոցով դիմել էր Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարին՝ խնդրելով մի ջոկատ ուղարկել Նախիջևան: Մոտ մեկ ամիս անց, հուլիսի 14-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի փոխանորդ և խորհրդական Ս. Թումանյանը նորից դիմեց Բրիտանական զորքերի հրամանատարին: Շեշտելով, որ վիճակը Նախիջևանի տարածաշրջանում ավելի է վատացել՝ նա ՀՀ վարչապետի անունից կրկին խնդրեց բրիտանական ջոկատ ուղարկելու Նախիջևան՝ ավելացնելով, որ Հայաստանի կառավարությունը համոզված է, որ «Նորին Մեծության թեկուզ փոքրիկ ջոկատի ներկայությունն այնտեղ իսկույն հանգստություն կմտցնի պանթուրքիստական էմիսարների կողմից հրահրվող մուսուլմանների մեջ՝ ցրելով Կովկասից դաշնակցային ուժերի հեռանալու և Թուրքիային իր հին պլանների իրագործման հնարավորություն ընձեռելու մասին կեղծ լուրերը[1]:

Բրիտանական հրամանատարությանն ուղղված այս խնդրանքը մնաց անպատասխան, բրիտանացիները արդեն շրջադարձվել էին դեպի Ադրբեջան և Վրաստան, և առանձնապես վճռական չգտնվեցին թաթարներին զսպելու խնդրում, «մինչդեռ Նախիջևանում թաթարական ապստամբության նախապատրաստությունն ընթանում էր մեծ թափով»: Եթե 1919 թ. Զանգեզուրում թաթարների սկսած շարժումն անհաջողության մատնվեց և ջախջախվեց, ապա Շարուր-Նախիջևանում դեպքերն այլ ընթացք ստացան: Այստեղ թուրքական և ադրբեջանական գործակալների օգնությամբ թշնամին ավելի պատրաստված և կազմակերպված գտնվեց, քան հայկական իշխանությունը և հայ բնակչությունը: Ապստամբության քարոզչական, կազմակերպական և ֆինանսական խնդիրները լուծում էր Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը, իսկ ռազմական նախապատրաստությունը ղեկավարում էին թուրքական բանակի սպաները՝ Խալիլ բեյի գլխավորությամբ:

Շարուրում և Նախիջևանում գտնվող հայկական զորքերին թիկունքից կտրելու նպատակով թշնամին որոշել էր ապստամբությունը սկսել Վեդիբասարում, ապա այն տարածել Շարուրում և Նախիջևանում: 1919թ. հուլիսի 1-ին Բոյուք-Վեդու և Դավալուի շրջանում մահմեդականները սպանեցին 9 հայ զինվոր և 12 գյուղացի:

Հուլիսի 14-ին Գողթան գավառի կոմիսար Ա. Մելիք-Մուսյանը հաղորդում էր Նախիջևանի նահանգապետին, որ ամսի 11-ին Օրդուբադում տեղի է ունեցել ժողով Գողթանի, Նախիջևանի և Շարուրի ամենահայտնի թաթար գործիչների մասնակցությամբ, որտեղ քննարկվել է «ապստամբության ծրագիրը և ռազմական մի շարք խնդիրներ»[2], ձգտելով համակարգել այդ ողջ շարժումն ընդդեմ Հայաստանի:

Այնուհետև հաղորդման մեջ նշվում էր, որ Ադրբեջանը ծրագրել է ընդհանուր ապստամբություն Նախիջևանի նահանգում, և որ այդ նպատակով բաց է թողել 25 միլիոն գումար[3]: Ա. Մելիք-Մուսյանը բերում էր նաև բազմաթիվ փաստեր, որոնք համոզիչ

---

[1]«Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2, էջ 113:
[2] Հ ԱԱ, ֆ. 200, g.1, գ. 212, թ. 114:
[3] Նույն տեղում:

կերպով վկայում էին, որ «կռիվը անխուսափելի է»[1]:

Հուլիսի 15-ին Նախիջևանի նահանգապետի պաշտոնակատար Մեժլումովը, որը փոխարինել էր անգլիացիների պահանջով Երևան մեկնած Վարշամյանին, ՀՀ ներքին գործերի նախարարին հղած հեռագիրը Նախիջևանում սկսված հակահայկական ապստամբության, պատերազմական գործողությունների ամփոփագիր էր հիշեցնում: Ահա այն. «Դրությունը անհանգիստ է, մարտական: Ամսի 8-ից սկսվել են թալանն ու սպանությունը: Կզնուտի և Նախիջևանի միջև տեղի է ունեցել հարձակում երրորդ տարածաշրջանի կոմիսարի վրա, կզնուտցիներից և այլ բնակավայրերից գերի են վերցրել 15 մարդ, այդ թվում՝ 4 կին: Անգլիական միսսիայի ներկայացուցիչը վերջնագիր է ներկայացրել մահմեդական ազգային խորհրդին, որ մինչև ամսի 16-ի երեկոյան գերիներն ազատվեն: Բայց երեկ նրանցից 9 մարդու սպանված են գտել, իսկ 1 կին ծանր վիրավորված հասել է գյուղ և տվել ցուցմունքներ: Այսօր գերի են վերցվել ղազանչեցի 42 մարդ զեյնադինցիների[2] կողմից, բայց թալանելուց հետո նրանց ազատել են, իսկ 2 կնոջ բռնաբարել: Հաշվի առնելով ընդհանուր անհանգիստ դրությունը, գեներալը չի համարձակվում պատժել սեփական ուժերով, քանի որ թվով քիչ են: Այս ամենի մասին տեղեկացված է Անգլիական Միսիայի ներկայացուցչին, որը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում: Առաջին և երկրորդ մասերում դեռ ոչ մի անկարգություն: Քաղաքում հանգիստ է»[3]:

Ապստամբության մասին նույն օրերին զգուշացնում էր նաև Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական նեկայացուցիչ Տ. Բեկզադյանը[4]: Նա հուլիսի 18-ին հաղորդում է. «Ադրբեջանը չի դադարում տենդագին նախապատրաստություններ տեսնելուց, որպեսզի ինչ գնով էլ լինի, իր իշխանությունը տարածի Զանգեզուրի և Նախիջևանի շրջանների վրա: Թե՛ Ղարաբաղում, թե՛ Զանգեզուրում և թե՛ Նախիջևանի շրջանում տեղի ունեցող ապստամբական բռնկումներն էապես իրար հետ կապ ունեն, և այդ ամենը կատարվում է նախապես մտածված և մշակված ծրագրերով: Հարկավ, այդ բոլոր ձեռնարկումները ուղղված են հայկական կառավարության դեմ և նպատակ ունեն մուսուլմանական գերիշխանությունը ուժեղացնելով՝ հայությանը շրջապատել թրքական օղակով և զրկել պետական շինարար աշխատանք կատարելու հնարավորությունից: Այդ նպատակով տաճկա-թրքական գաղտնի քաղաքական կազմակերպությունները իրենց գործակալների միջոցով աշխատում են Հայաստանին կցված երկրամասերի մահմեդական ազգաբնակչության թշնամական տրամադրությունը ուժեղացնել՝ մատակարարելով նրանց թե՛ դրամական միջոցներ, թե՛ զենք և թե՛ ռազմամթերք»[5], որից բնականաբար տեղյակ էին բրիտանական հրամանատարները, բայց բավականաչափ հետևողական և անաչառ չէին այդ խնդրի լուծման հարցում, որոշ դեպքերում էլ դիտորդի դերում էին, որով ադրբեջանցիները ավելի էին խրախուսվում և անպատիժ գործում:

Ակտիվ էին գործում հատկապես թուրք գործակալները: Այդ օրերին՝ մասնավո-

---

[1] Նույն տեղում, թ. 115:

[2] Զեյնադինը գտնվում էր Նախիջևան քաղաքից 7 կմ հարավ-արևելք, Նախիջևան գետի ձախակողմյան շրջանում:

[3] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 111:

[4] Տ.Բեկզադյանը Բաքվում ՀՀ ներկայացուցիչ է նշանակվել 1919 թ. մարտին: Ավելի ուշ եղել է նաև ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում:

[5] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 50, թթ. 12-14:

ռապես հուլիսի 23-ին, Մ. Քեմալը էրզրումում արտասանած ճառում, մեծարելով թուրք ազգին, լուտանքներ թափելով հպատակեցված ժողովուրդների հասցեին, նշում է. «Օսմանյան հույներն ու հայերը… սկսել են արյունալից խռովություններ կազմակերպել», որ ընդհանրապես հայերը «ագրեսիվ մտադրություններ ունեն: Նրանք Նախիջևանից մինչև Օլթի նեղում են մահմեդական բնակչությանը և մի քանի այլ վայրերում կազմակերպում կողոպուտներ ու սպանություններ: Հայերը փորձում են մինչև մեր սահմաններն ընկած այդ շրջանների բոլոր մահմեդականներին ոչնչացնել և այդպիսով կանոնավորապես իրականացնել իրենց մտադրությունները մեր արևելյան վիլայեթների նկատմամբ: Մյուս կողմից՝ նրանք ուզում են մեզ մոտ ուղարկել բոլոր թուրքահայերին, որոնք, նրանց պնդմամբ, մոտ 400 հազար են և հուսալի հենարան են ապագա ագրեսիվ պլաններում»[1]:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ թաթարները Նախիջևանի գավառի գյուղական վայրերում ակտիվ մարտական գործողություններ սկսել են հուլիսի 17-ին, իսկ Նախիջևան քաղաքում՝ հուլիսի 20-ին: Նոր Բայազետի գավառի կոմիսար Հակոբյանցը հուլիսի 26-ին հեռագրում էր Երևան, որ «ժամանել են հրաշքով փրկված մարդիկ Նախիջևանից, հայտնում են, որ Նախիջևանում ամենուր թաթարներ են, սկսել են ռազմական գործողությունները, Մազրայի բնակչությունը ամբողջովին գլխատված է, երկու Դիզաները, Դիդուվարը, Գյուլթափան, Նազարաբատը, Յարմջան, Ղարաբաբան, մյուս բնակչությունը զորքով հաջող պաշտպանում է Այլաբատը: Զնաբյուրտը տեղահանվել է, փախստականները ժամանել են Մարտիրոս, Նախիջևանում խնդրում են օգնություն: Դարալագյազում զորակոչված է ողջ բնակչությունը, չկան բավական քանակությամբ ուժեր, որպեսզի գործեն երկու ճակատով, Շարուրում, Նախիջևանում մեծ պակաս կա 3 գծանոց փամփուշտի, զենքի, մարդկանց: Իմ կողմից խնդրում եմ հրատապ միջոցներ ձեռք առնել շրջափակվածների վիճակը հեշտացնելու ուղղությամբ»[2]:

ՀՀ խնամատարության նախարարության Զուղայի ներկայացուցիչ Ս. Հարությունյանը հետագայում վկայել է, որ 1919թ. հուլիսի 20-ին Նախիջևանից հեռագիր է ստացել, որ այնտեղ հայկական զորքերի և թաթարների միջև սկսվել է հրացանաձգություն[3]:

ՀՀ բանակի գլխավոր շտաբի պետ Զինկևիչը հուլիսի 28-ին ՀՀ զինվորական նախարարին ուղարկած հեռագրում հաղորդում էր հետևյալը. «գեներալ Շելկովնիկովը հուլիսի 25-ին՝ ժամը 13-ին, Զնաբերդ գյուղից, որը 35 վերստ հյուսիս-արևմուտք է Նախիջևանից, հայտնում է, որ հուլիսի 20-ից մինչև 25-ը մարտեր է մղել Նախիջևանում և շրջակայքում, բոլոր կողմերից ճնշող թշնամու հետ, որը 24-ի առավոտյան բազմաթիվ հարձակումներից հետո գրավել է Շխմահմուդը: Փամփուշտների պակասը, զորքի գերհոգնածությունը, աշխատավարձի բացակայությունը, հրանոթներից մեկի շարքից դուրս գալը ստիպել է Շելկովնիկովին հետ քաշվել՝ թողնելով գումակները Ազնաբյուրտ գյուղում»[4]: Զինկևիչը, որը Հայաստանի նկատմամբ համակրանքով էր արտահայտվում, նաև տեղեկացնում էր, որ Նախիջևանի հայկական գյուղերից շատերը սրի էին քաշվել թաթարների կողմից, իսկ փրկված փախստականները նահանջել էին գե-

---

[1] Кемаль М., Путь новой Турции, Соцэкгиз, М., 1929, т. 1, с. 222-223.

[2] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 121:

[3] Նույն տեղում, ֆ. 205, g. 1, գ. 541, թ. 58:

[4] Նույն տեղում, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 116:

ներալի հետ: Փակվել էր ճանապարհը դեպի Շարուր-Նախիջևան: Թաթարները գրավել էին մի քանի շրջաններ՝ Շարուրի կողմից Յայջին, արևմուտքում՝ Չիվա Կուզուլջ, արևելքում՝ Զուլ: Գեներալ Շելկովնիկովը, գնդապետ Մելիք-Գյուրջիևը փամփուշտի, հացի, փողի, բայց նախ և առաջ դեղորայքի և վիրակապային նյութերի կարիք ունեին: Դրոն գեներալ Շելկովնիկյանին հրամայել էր անցնել Դարալագյազ, ընդունել հրամանատարությունը գնդապետ Մելիք-Գյուրջիևից և կապիտան Գալուստյանցից, որոնք տեղական ուժերով պահում էին Դարալագյազի շրջանը, իսկ հարավից՝ կապը Զանգեզուրի հետ: Զինկևիչը գտնում էր, որ գեներալ Շելկովնիկյանը պետք է Սելիմի լեռնանցքով շտապ անցներ Նոր-Բայազետ, որի համար անհրաժեշտ էր նրան ուղարկել մեծ քանակությամբ զենք-զինամթերք, 2 վագոն ալյուր, 20 փութ շաքար, դեղորայք և վիրակապային նյութեր: 500.000 էլ պետք էր փոխանցել Յապոնին, որը գնում էր Նոր Բայազետ:

Իսկ իրադարձությունները զարգացել էին հետևյալ կերպ:

1919թ. հուլիսի 17-ին Նախիջևանում՝ Ռահիմ խանի բնակարանում, գաղտնի ժողով էր գումարվել, որտեղ էլ հավանաբար մշակվել էր գործողության ծրագիր[1]: Ինչպես նշեցինք, խռովությունը սկսվեց հուլիսի 20-ին: Որպես առիթ օգտագործվեց թուրքական բանակի նախկին ասկյարի ձերբակալությունը, որը տեղական ավազակախմբերից մեկի ղեկավարն էր:

Ըստ ծրագրված սցենարի փակվեցին քաղաքի խանութներն և ավազակախմբերը, որոնք կազմ ու պատրաստ էին, գործի անցան՝ սկզբում շուկայում, ապա նաև քաղաքի մյուս մասերում հարձակվելով հայ քաղաքացիների, միլիցիոներների ու զինվորների վրա: Հարձակում սկսվեց նաև հայկական պահակակետերի վրա: Անակնկալ հարձակումից ուշքի գալով՝ հայկական կայազորը շուտով կարողացավ դրության տերը դառնալ և գրավել քաղաքի մեծ մասը: Իսկ հակառակորդը դիմեց խորամանկության՝ որոշելով ժամանակ շահել, մինչև գավառում իրենց գործն ավարտած խռովարարներն օգնության կգային: Նույն օրը երեկոյան Քերբալա խանը անգլիական ներկայացուցչի կողմից վավերացված գրություն ուղարկեց հայկական կայազորի հրամանատարին՝ առաջարկելով վերջ տալ կռիվներին և սկսել հաշտության բանակցություններ: Անգլիական սպայի ստորագրությունը հավատ ներշնչեց և հայկական կողմը դադարեցրեց կռիվը: Նախիջևանում ծագած խռովության և այն դադարեցնելու մասին Երևանում տեղեկացան նույն օրը՝ բաշ-նորաշենցի գնդապետ Ղարաքեշիշևի ուղարկած ռադիոգրից: Վերջինս հայտնում էր, որ Շարուրում անգլիական նեկայացուցիչ լեյտենանտ Չարլսը սկզբում հաղորդել է Նախիջևանում ապստամբության և կռիվների, ապա նաև այն մասին, որ կռիվները դադարեցվել էին և որ ապստամբները պատվիրակություն էին ուղարկել և ընդունել հայկական իշխանությունը[2]:Երևանում այս լուրն ընդունում են միայն ի գիտություն և ոչինչ չեն ձեռնարկում: Ասենք, որ Բրիտանական զորքերի հիմնական մասը Անդրկովկասից 1919 թ. օգոստոսի կեսերին դուրս բերելուց հետո բրիտանական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ կերպափոխվել էր, գործում էր երկակի ստանդարտների սկզբունք, և նրանք արտաքուստ ցույց տալով իրենց դեռևս պահպանվող տրամադրվածությունը Հայաստանի նկատմամբ, սկսել էին վարել

[1] Զոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները», էջ 152:
[2] Զոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները», էջ 152լ:

ադրբեջանամետ քաղաքականություն:

Քերբալա խանի հետ հայկական պատվիրակների հանդիպումն ընթանում է անգլիական ներկայացուցիչ Շվինդի մասնակցությամբ: Որոշվում է կարգը վերականգնելու համար ստեղծել խառը միլիցիա: Սակայն հայկական զորամասի հրամանատարությունը հաջորդ օրը լուր չի ստանում ո՛չ Քերբալա խանից և ո՛չ էլ կապիտան Շվինդից: Այս առիթով «Հառաջ» թերթը գրում է, որ երեկոյան հայկական գումարտակները «ստիպված դիմում են Քերբալա խանին՝ առաջարկելով բացել խանութները և սկսել խաղաղ աշխատանքը: Խանը խոստանում է, սակայն հաջորդ օրը, անցնելով ապստամբների գլուխ, քաղաքի Սարվանլար թաղամասից հարձակվում է հայկական դիրքերի վրա: Վերսկսված կռիվը նորից հաջողություն չի բերում ապստամբներին: Հայկական զորքերը ոչ միայն հետ են մղում հարձակումը, այլև գրավում են Սարվանլարը: Կրկին միջամտում է անգլիացի կապիտանը և հայերին առաջարկում կռիվը դադարեցնել ու հետ քաշվել, որից հետո կքաշվեն նաև մահմեդական ուժերը, և խաղաղությունը կվերականգնվի: Հայերը հրաժարվում են կատարել այդ պահանջը՝ արդարացիորեն նշելով, որ թուրքերը նման դեպքերում միշտ խաբել են և պահանջում են, որ խռովարարները զենքը վայր դնեն՝ իրենց կողմից վստահեցնելով, որ այդ դեպքում պատժամիջոցներ չեն կիրառվի»[1]:

Սակայն հաջորդ օրը, տեսնելով որ գավառից եկող ավազակախմբերը կարող են շրջապատել քաղաքը, հայկական զորքերի հրամանատարությունը որոշում է հուլիսի 24-ին բնակչության հետ նահանջել Դարալագյազ: Նշենք, որ նահանջը եղել է կազմակերպված, որի շնորհիվ փրկվել են նախիջևանահայության վերջին բեկորները:

Այդ օրերին Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք Թանգյանը ՀՀ վարչապետին ուղղած նամակում գրում էր. «Համենայն դեպս Նախիջևանի գարնիզոնին շատ բանում մեղադրում են, նրանք այդքան ուժով և կապ պահպանելով Զուղայի քաջերի հետ, շատ բան կարող էին անել, մանավանդ որ Գողթան և Զանգեզուր կողքներին էր, ես չեմ կարող մեղադրել, քանի որ փաստացի ոչինչ չգիտեմ, միայն կարող եմ թուրքերի ասածները կրկնել, որ Նախիջևանի թուրքերը ոչ միայն չէին հավատացել, որ գարնիզոնը նահանջել է, այլև երեք օր շարունակ ուրախություններ էին սարքել այդ առթիվ, քանի որ իրենց փամփուշտները վերջացած էին եղել և մարդիկ էին ուղարկել Մակու, Թավրիզ փամփուշտի»[2]:

Նախիջևանի ապստամբության հենց առաջին օրերին ՀՀ կառավարությունը փորձեց Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի ռազմական հրամանատարության միջոցով ճնշում գործադրել Ադրբեջանի կառավարության վրա՝ ապստամբությանը ցույց տրվող աջակցությունը դադարեցնելու համար: Հուլիսի 24-ին ՀՀ վարչապետը գեներալ Կորինին հայտնեց, որ անվիճելի փաստերի համաձայն, որոնք տրվել են Երևանում բրիտանական միսիային, բոլոր շարժումները կազմակերպել է ադրբեջանական կառավարությունը իր միջոցներով և թուրքական սպաների միջոցով: Վարչապետը Հայաստանի կառավարության անունից խնդրում էր կարճ ժամկետում ձեռք առնել անհրաժեշտ միջոցները և Ադրբեջանի կառավարությունից պահանջել դադարեցնել Հայաստանում

[1] «Հառաջ», 26 նոյեմբերի, 1919:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 266, թ. 34:

թաթարական շարժումներին օժանդակություն ցուցաբերելը[1], սակայն առանձնապես արդյունավետ քայլեր բրիտանացիների կողմից չեն հետևում:

Իսկ ինչպես էին ընթանում իրադարձությունները Նախիջևանի գյուղերում: Այդ մասին տեղեկանում ենք Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանի հաղորդումից. «Նախիջևան քաղաքի շրջապատի գյուղերի հայերը, մնալով անպաշտպան, շրջապատվում են թուրքերով, կոտորվում են ոչխարի նման տղամարդիկ, իսկ կանայք և երեխաները մորթվում են և թափվում են Երասխ: Օրերով Երասխը դիակ էր, որ տանում էր իր հոսանքով: Մահմեդական Յայջի, Բուլղան և Կարաչուն գյուղերը հավաքեցին Ղարախանաբակլու, Յամխանա, Կզնուտ, Արազին, Յարմջա և այլ հայկական գյուղացիներին Բուլղան և Կարաչուն գյուղերում, մորթոտեցին և թափեցին Արաքս»[2]: Կոտորվեցին նաև Մազրա (Նորս), Դիդուվար, Գյուլթափա, Նազարաբաթ և Ղարաբաբա գյուղերի բնակիչները[3]:

Զուղայի շրջակա Ապրակունիսը, Նորաշենը և Ղազանչին ևս արժանացան նույն բախտին, բնակիչները կոտորվեցին ամբողջությամբ: Միայն Աստապատ, Թազաքենդ գյուղի 800 բնակիչների հարևան մահմեդական Ներհամի գյուղապետի ջանքերի շնորհիվ հաջողվել է տեղափոխվել Ներհամ և ազատվել կոտորածից:

Երկու հայ զինվորների քաջության շնորհիվ կոտորածից փրկվեցին Զուղայի, Դարաշամբի և Կարմիր վանքի բնակիչները: Զուղայի սահմանապահ ուղեկալի հրամանատար՝ ենթասպա Գրիգոր Հովհաննիսյանը, հուլիսի 21-ին գնացքով Պարսկաստան մեկնողներից տեղեկություն ստանալով, որ Նախիջևանում մարտեր են սկսվել, որոշում է հետախուզության գնալ Աստապատ: Երկու անգամ Կարմիր վանք գյուղ գնալ-գալուց հետո, համոզվելով, որ գյուղին վտանգ է սպառնում, նա իր զինվորների հետ գյուղացիներին անվնաս հասցրեց Զուղա: Հուլիսի 25-ի առավոտյան Յայջի գյուղից 300 զինված մահմեդականներ հարձակում են սկսում Զուլֆայի մաքսատան ուղղությամբ: Ունենալով կռվի ընդունակ 18 զինվոր՝ ենթասպա Մ. Չալարյանի հետ Գր. Հովհաննիսյանը համարձակ գրոհի է գնում, հետ մղում թշնամուն, գրավում կամուրջը և 787 հոգու անցկացնում պարսկական ափ[4]:

Այս փոքրիկ հաջողությունն իսկ վկայում է, որ կազմակերպված և վճռական գործելու դեպքում Նախիջևանը կարելի էր առնվազն երկար ժամանակ պահել:

Երբ Նախիջևանում կենաց մահու կռիվ էր ընթանում փոքրաթիվ հայկական ուժերի և թաթար ապստամբների միջև, Շարուրում ևս ապստամբություն բռնկվեց: Այն գլխավորում էր թուրքական բանակի գնդապետ Խալիլ բեյը: Նրա տրամադրության տակ կային Ադրբեջանից ժամանած 800 հեծյալներ, 150 թուրք սպաներ և ասկյարներ, ինչպես նաև 2000 հոգի տեղի մահմեդականներից:

1000 հոգուց բաղկացած հայկական ուժերը գնդապետ Ղարաքեշիշևի հրամանատարությամբ տեղաբաշխված էին Սադարակում, Բաշ-Նորաշենում և Շահթախտում:

Երբ հուլիսի 20-ին Բաշ-Նորաշենում լուր ստացվեց Նախիջևանում սկսված ապստամբության մասին, Շարուրում գտնվող անգլիական միսիայի ղեկավար լեյտենանտ

---

[1] Նույն տեղում, ֆ. 276, g. 1, գ. 183, թ. 32:
[2] Նույն տեղում, թ. 34:
[3] Նույն տեղում, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 121:
[4] Նույն տեղում, գ. 541, թթ. 58-59:

Չարլսը հավաքեց տեղի թաթար բնակչության ներկայացուցիչներին և զգուշացրեց, որ եթե այստեղ հետևեն Նախիջևանի օրինակին, ապա ապստամբ գյուղերը բրիտանական թնդանոթներով կսրբվեն երկրի երեսից: Սակայն, նման սպառնալիքները մահմեդականների վրա այլևս ազդեցություն չէին գործում, և մի քանի հոգուց բաղկացած միսիան սարսափ ազդել չէր կարող[1], որովհետև շատ դեպքերում դրանք ընդամենը մնում են որպես ոչ գործնական քայլեր, ոչ տպավորիչ գործողություններ, անհետևողական էին և արդեն չէին ազդում թուրք-թաթարական ագրեսիվ խմբերին զսպելու առումով, որին նպաստում էր նաև ՀՀ կառավարության ոչ ակտիվ գործելակերպը, չարդարացված հույսեր կապելը դաշնակիցների և մասնավորապես բրիտանական ռազմաքաղաքական ղեկավարության հետ: Հենց նույն օրը շուրջ 300 հոգուց բաղկացած մի ավազակախումբ հարձակվեց Խանլուխլար գյուղի վրա, բայց դեմ առնելով գյուղացիների դիմադրությանը, հեռացավ:

Ապստամբությունը Շարուրում սկսվեց երկու օր անց՝ հուլիսի 22-ին: Այդ օրը թաթարական մեծաթիվ ուժերը գրոհեցին Շահթախթի վրա, իսկ 23-ի գիշերը կռիվներ սկսվեցին Բաշ-Նորաշենում և Նորաշեն կայարանում: «Հառաջ» թերթը հետագայում հաղորդում է, որ Նորաշեն կայարանում հայկական զորքը և բնակչությունը անխուսափելիորեն կընկնեին շրջապատման մեջ, եթե զրահագնացքն օգնության չհասներ[2]: Այնուհանդերձ կորցնելով անձնակազմի կեսը՝ հայկական զորքերը Նորաշենից և Բաշ-Նորաշենից մարտերով նահանջեցին Չանախչի և Զինջիրլու[3]:

Շահթախթում տեղակայված հայկական երկու վաշտերը համառ մարտեր մղելով նահանջում են և հուլիսի 23-ին ամրանում Խանլուխլար գյուղում: Այստեղ ամբողջ օրը շրջապատված վիճակում նրանք հերոսական դիմադրություն են ցույց տալիս թշնամու գերակշիռ ուժերին: Այստեղ էին հավաքված նաև շրջակա Վարմազիար, Ալաքլու, հայկական Դաշարխ, Փարչ, Թազաքենդ և Քըշթաղ գյուղերի հայ բնակիչները:

Սակայն պաշտպանների զինամթերքը սպառվում էր, բացի դրանից, Բաշ-Նորաշենը և Նորաշենը գրավելուց հետո Խալիլ բեյը գրություն էր ուղարկել Խանլուխլարի հայերին՝ առաջարկելով զինաթափ լինել: Խանլուխլարի բնակիչները, պատգամավորներ ուղարկելով և համոզվելով, որ իրոք Խալիլ բեյն է գրություն ուղարկողը, 225 հոգով անձնատուր են լինում[4]:

Անձնատուր եղած հայերը, ըստ մի շարք արխիվային փաստաթղթերի, արժանացան դաժան կտտանքների: Սեպտեմբերի 3-ին երևանաբնակ մի խումբ շարուրցիներ դիմում են Հայաստանի խորհրդարանին՝ հայտնելով, որ «…հասնող ճիշտ, ստուգված լուրերի համաձայն թուրք ամբոխը իր դարավոր ոխերի համար… զանազան պատրվակների տակ, հազար ու մի տեսակ չարչարանքների ու տանջանքերի է ենթարկում զինաթափ եղած անմեղների կյանքը, կոտրատելով, սպանելով հայ երիտասարդներին, բռնաբարելով կանանց և այլն, և այլն»[5]:

Վեց օր անց արդեն Խանլուխլարից ՀՀ վարչապետի անունով ստացվեց հայերի

---

[1] Զոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները», էջ 166:
[2] «Հառաջ», 27 սեպտեմբերի, 1919:
[3] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 117:
[4] «Ժողովուրդ», Երևան, 18 նոյեմբերի, 1919:
[5] ՀԱԱ, ֆ. 222, g. 1, գ. 138, թ. 1:

նեկայացուցիչների խնդրագիրը, որը, անկասկած, կազմվել էր Խալիլ բեյի թելադրանքով: Շարուրցիները հայտնում էին, որ «զենքը հանձնելու օրվանից հայերը, շուրջ 2300 հոգի, ապրում ենք հանգիստ ու խաղաղ, մուսուլմաններից ոչ ոք մեզ ձեռք չի տալիս:Մեր խիստ կարիքը հաց և դեղորայքն է, սովից և վարակից, հիվանդություններից օրական 25-30 մարդ է մահանում… խոնարհաբար խնդրում ենք ցորեն և դեղորայք ուղարկել, այլապես կործանվում ենք:…Նախիջևանի գավառի Թազաքենդ-Աստապատի հայերը նույնպես հացի և դեղորայքի կարիք ունեն»[1]:

Հաջորդ փաստաթուղթը կազմվել է ավելի ուշ՝ 1920 թ. մարտի 20-ին Երևանում, քըշթաղեցի Միսակ Հովհաննիսյանի ցուցմունքների հիման վրա: Նա, մի կերպ փրկվելով և հասնելով Երևան, կատարվածի մասին հաղորդել էր հետևյալը. «Զանգեզուրի անհաջողությունից և Խաչիկ գյուղի տակ պարտությունից հետո մեր դրությունը վերջապես դարձավ անտանելի: Գազազած մուսուլմանների բանդաները ներխուժում էին մեզ մոտ, ընտրում աղջիկներ, կանայք և հենց այդտեղ բռնաբարում և սպանում էին: Ուրիշներին տանում էին: Մեզ, տղամարդկանց սվինահարում էին, դաժանորեն ծեծում և սպանում: Երեխաներին նետում էին փոսերը և վերևից վառում: Բնակչությունը սկսեց փախչել բոլոր ուղղություններով, բայց մեզ ամենուրեք հասնում էին և գազանաբար ոչնչացնում: Բոլոր այդ գազանություններն արվում էր Ենգիջա գյուղում գտնվող փաշայի հրամանով… Ավելի քան երկու հազարից ավելի հայկական բնակչությունից մեզ՝ քսան մարդու ընդամենը հաջողվեց ազատվել ծանոթ մուսուլմանների օգնությամբ և մնալ կենդանի»[2]: Մեկ այլ աղբյուրում նշվում է, որ միայն 300-350 հոգի են կարողանում մի կերպ ազատվել և անցնել հայկական գյուղեր[3]:

Իսկ ինչպիսի՞ն էր իրավիճակը Գողթանում, որը Նախիջևանում հայկական իշխանության օրոք գավառի կարգավիճակ էր ստացել՝ Օրդուբադի փոխարեն կենտրոն ունենալով Ագուլիսը: Այստեղ կյանքը կարծես թե խաղաղ հունի մեջ էր մտել և որոշ ժամանակ հայերի ու թաթարների միջև հարաբերությունները խաղաղ էին: Սակայն դա լոկ թվացյալ էր: Նախիջևանի հայերի նահանջից ոգևորված Գողթանի թաթարներն արդեն հուլիսի 25-ին ուժեղ կռիվներ սկսեցին: Գողթանի գավառային կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանն օգոստոսի 3-ին և 18-ին հաղորդում էր, որ հայկական Վերին և Ներքին Ազա, Դեր, Շուռութ, Փորադաշտ, Գյաղ գյուղերը, ինչպես նաև Ղազանչի գյուղից 500 հայեր մահմեդականների ճնշման տակ անցել են Գողթանի լեռնային հատված: Նա նշում էր նաև, որ հայերը ոչնչացրել են թաթարական Բիլավ և Բեյրութ գյուղերը: 10-օրյա համառ կռիվներից հետո ընկնում է Տանակերտ հայկական գյուղը: Դաժանորեն ոչնչացվում է նաև հայկական փոքրիկ Քաղաքիկ գյուղը: Այս գյուղից միայն մի խումբ երիտասարդների է հաջողվում հեռանալ լեռներ, մնացած ողջ բնակչությունը ոչնչացվում է, բացի 40-50 երիտասարդ աղջիկների, որոնք գերեվարվում են[4]:

Տանակերտի անկումից և Քաղաքիկի կոտորածից հետո Վերին և Ներքին Ագուլիսները ճանաչում են Ադրբեջանի իշխանությունը[5]: Վ. Ագուլիսի ժողովուրդը Օրդուբա-

---

[1] Նույն տեղում, ֆ. 205, g. 1, գ. 780, թ. 485:
[2] Նույն տեղում, ֆ. 200, g. 1, գ. 484, թ. 21:
[3] «Ժողովուրդ», 20 հոկտեմբերի, 1920:
[4] Հախնազարյան Հ., Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 334:
[5] ՀԱԱ, ֆ. 119, g. 1, գ. 95, թ. 5; ֆ. 201, g. 1, գ. 170, թթ. 19-20:

դում գտնվող Ադրբեջանի իշխանության ներկայացուցչին տալիս է մոտավորապես հետևյալ բովանդակությամբ համախոսական. «Մենք, Վ.Ագուլիսի ժողովուրդս, ճանաչում ենք Ադրբեջանի կառավարության Օրդուբադում գտնվող ներկայացուցչին և խնդրում ենք նրա հովանավորությունը»[1]: Ագուլիսների օրինակին հետևում է Ցղնայի Չանանաբի բնակչությունը: Սրանք ևս երեք պատգամավոր են ուղարկում Օրդուբադ և խոսք տալիս համերաշխ ապրել հարևան թաթարների հետ[2]:

Այդ օրերին գավառապետ Աշոտ Մելիք-Մուսյանը գտնվում էր Ռամիսում և ծրագրեր էր մշակում նախահարձակ լինելու մասին: Այստեղ օգոստոսի 25-ին գումարվեց Գողթանի հայության 5-րդ համագումարը, որին մասնակցում էին Բիստ, Փառակա, Ալահի, Մեսրոպավան, Ռամիս, Տանակերտ, Քաղաքիկ, Դեկսար, Շուռութ, Փորադաշտ, Գյաղ, Ղազանչի, Ազա և Դեր գյուղերի 40 պատգամավորներ: Քննարկվեց ստեղծված դրությունը և ընդունվեցին որոշումներ: Դրանք մասնավորապես նախատեսում էին պարզել Հայաստանի կառավարության վերաբերմունքը դեպի Գողթանը, հնարավոր միջոցները Գողթանը ապահովելու դրսի ուժով, հացով և դրամով, սերտ կապի հաստատում Գենվազի, Ղափանի և Գորիսի հետ: Որոշվեց նաև խնդրել Զանգեզուրի ղեկավարությանը, որ հովանավորեն և կառավարեն Գողթանը: Որոշումների վերջում նախատեսվում էր դիմել Հայաստանի կառավարությանը, և եթե «Հայաստանի կառավարութիւնը զլանալու լինի անմիջապես պատասխանելու Գողթանի դրած հարցերին, այն ժամանակ համագումարը այս արձանագրութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով, լրագիրների միջոցով, հասարակական լայն խավերի նիւթ է դարձնելու և իր դատը հանձնելու համայն հայութեան պաշտպանութեանը»[3]:

Համագումարի որոշումները գավառի միլիցիայի պետ Մովսես Գյուլնազարյանը Զանգեզուրով հասցրեց Երևան և սեպտեմբերի 8-ին երկու զեկուցագիր ներկայացրեց՝ մեկը՝ Նախարարների խորհրդին, մյուսը՝ ներքին գործերի նախարարին: Ներկայացնելով ստեղծված իրադրությունը, նա համագումարի անունից խնդրեց ՀՀ կառավարության գրավոր հրահանգները Գողթանի անելիքների մասին[4]:

ՀՀ կառավարությունը սեպտեմբերի 9-ին քննարկելով Գողթանի հարցը, որոշեց դրամի պահանջը բավարարել, իսկ հաց ու մարդիկ ուղարկելը համարեց անհնար[5]: Նույն օրն էլ պատրաստվեցին 5-րդ համագումարի նախագահությանն ուղարկվող այս հրահանգները: «Երևանի հայությունը միշտ եղբայրական սրտացավ վերաբերմունք է ունեցել և ունի դեպի Գողթանի անջատված հայ ազգաբնակչությունը: Եթե մեզնից տեղեկություններն ու լուրերը ուշ են ստացվում, դրա պատճառը հաղորդագրության դժվարությունն ու ճանապարհների հեռավորությունն է: Ուղարկում ենք Ձեզ վերջին լուրերն ու թերթերը: Բանակցություններ ենք վարում գլխավոր կոմիսար գնդապետ Հասկելի հետ՝ Նախիջևանի և Շարուրի գավառներում ամերիկյան նահանգապետություն հաստատելու համար: Ձեզ մոտ նրա ներկայացուցիչ նշանակված Դ-ր Աշերը իր հետ բերում է փող և դեղորայք:

---

[1] Նույն տեղում, ֆ. 314, g. 1, գ. 41, թ. 11:
[2] Նույն տեղում,:
[3] Նույն տեղում, ֆ. 199, g. 1, գ. 95, թթ. 2-4:
[4] Նույն տեղում, ֆ. 201, g. 1, գ. 170, թթ. 22-23:
[5] Նույն տեղում, թ. 21:

Ազգային խորհուրդը, եթե առանձին ազգային վտանգ չի սպառնում՝ թող մնա իր տեղը, իսկ եթե որևէ անապահովություն է զգացվում, լավ կլինի, որ ժամանակավորապես փոխադրվի Զանգեզուր:

Մենք ուժի չենք դիմելու և ոչ էլ ուժով ենք գալու ձեզ մոտ, մեր ցանկությունն է համաձայնության ճամփով բանալ երկաթուղին և ալյուր ուղարկել:

Չպետք է մոռանանք, որ Հայաստանն ինքն էլ անընդհատ ենթարկվում է հարձակումների գրեթե իր բոլոր սահմաններում, և չնայած այդ ծանր դրության մենք միշտ հիշում ենք Գողթանն ու նրա բնակչությունը և ամեն կերպ աշխատում աջակցություն ցույց տալ մեզնից անջատված մեր հարազատ եղբայրներին»[1]:

Իրականում ՀՀ կառավարությունը, որը գտնվում էր այսպես կոչված «Դաշնակիցների ճնշման տակ և որոշակիորեն կաշկանդված էր ընթացող բանակցություններով, գաղտնի կերպով ստեղծում է երկու ջոկատ՝ Գարեգին Նժդեհի և Ղազար Քոչարյանի գլխավորությամբ, որոնք Դարալագյազի և Զանգեզուրի վրայով պետք է անցնեին Գողթան, փաստորեն իրականացնելով Ա. Մելիք-Մուսյանի օգոստոսի 3-ի խնդրանքը, որում նշվում էր. «Փրկված է Գողթանը, եթե գոնե 400 սրտացավ հայ զինվոր մեզ օգնության հասնեն»[2]: Եթե հանգամանքների բերումով Նժդեհը մնաց Մեղրիում և կազմակերպեց Ղափան-Գենվազի պաշտպանությունը, ապա Ղ. Քոչարյանը հոկտեմբերի 2-ին հասավ Գողթան: Նրա ժամանումը որոշ չափով հուսադրեց Գողթանի պաշտպաններին: Հայկական ուժերի թիվը հասնում էր յոթութ հարյուրի, երկու թնդանոթներով և 6 գնդացիրներով: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գավառում դրությունը հանգիստ էր, բայց նոյեմբերին, Զանգեզուրում ադրբեջանական ուժերի խայտառակ պարտությունից հետո, Գողթանում նորից սկսվեցին հարձակումները հայկական գյուղերի վրա:

Նոյեմբերի 10-ին Օրդուբադի թաթարները հարձակում սկսեցին Նազրվազի և Ալահիի ուղղությամբ, սակայն 5-ժամյա համառ պայքարից հետո թշնամին հետ շպրտվեց, կրելով մեծ կորուստներ[3]: Երկրորդ հարձակումը սկսվեց ամսի 25-ին, որը նույնպես հայկական ուժերը հաջողությամբ հետ մղեցին: Դեկտեմբերի 5-ին Երևան ուղարկած հեռագրում Նժդեհն այսպես էր ներկայացնում կռիվների ընթացքը. «Նոյեմբերի 25-ին թշնամին երկրորդ անգամ շրջապատեց Նազրվազ-Ալահի-Բիստը: Կռիվը տևեց 7-ից 14 ժամ: Ջոկատը ցույց տվեց համառ դիմադրություն, ետ է շպրտել թշնամուն, գրավել գերիներ և մեկ դրոշ: Թշնամին թողել է մինչև հիսուն դիակ, հատկապես տուժեց մեր հրետանու կրակից թշնամու հեծելազորը: Նույն օրը Օրդուբադի ուժերը երկու կողմից հարձակվեցին Ռամիսի վրա և այդ հարձակումը ավարտվեց թշնամու լրիվ պարտությամբ: Նժդեհ»[4]:

Պաշարված վիճակում, թիկունքում ունենալով Ողջիի և Գեղվաճորի թշնամաբար տրամադրված թուրքաբնակ գյուղերը, հնարավոր չէր երկար դիմադրել: Ահա թե ինչու Ղափան Գենվազի և Գողթանի զինված ուժերի հրամանատարությունը որոշեց մաքրել այդ շրջանները թուրքական գյուղերից: 1919թ. նոյեմբերի 18-ին Գողթանի, իսկ 21-ին Ղափանի հայկական ուժերը մտան Ողջիի ձոր և քշեցին թուրքերին, իսկ դեկտեմբերի

---

[1] Նույն տեղում, ֆ. 199, g. 1, գ. 95, թ. 1:
[2] Նույն տեղում, ֆ. 201, g. 1, գ. 170, թ. 20
[3] Նույն տեղում, ֆ. 199, g. 1, գ. 110, թ. 18:
[4] Նույն տեղում, ֆ. 200, g. 1, գ. 50, թ. 378:

1-ին Նժդեհի հրամանատարությամբ հայկական ուժերը մտան Գեղվածոր և 7-8 օրվա ընթացքում այդ տարածքը ևս մաքրեցին թշնամուց, որը փախչելով անցավ Նախիջևան[1]: Նժդեհը պատրաստվում էր շարժվել Օրդուբադի վրա, սակայն Զանգեզուրում հայկական ուժերի հրամանատար գեներալ Ղազարյանը հրամայեց դադարեցնել հարձակումը[2]:

Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 18-ին Ողջիի և Զանգեզուրի թաթարները ներխուժեցին Ներքին Ագուլիս և տեղի թաթարական խուժանի հետ սկսեցին կոտորել ու թալանել հայ բնակչությանը: Դեպքերի ականատես, կոտորածից փրկված Ագուլիսի հաշտարար դատավոր Հովհաննես Տեր-Անտոնյանը 1920 թ. հունվարին Երևանում հայտնում էր, որ Ներքին Ագուլիսի բնակիչները, թողնելով բնակարանները և ունեցվածքը, իսկ ոմանք էլ իրենց երեխաներին և ծերերին, փախչում էին Վերին Ագուլիս[3]:

Այն, ինչ հետագա օրերին կատարվեց Վ. Ագուլիսում, շատ բնորոշ է մի կողմից հայերի միամտությունը, մյուս կողմից՝ թուրքերի դավադիր և արնախում էությունը ներկայացնելու առումով: Վ. Ագուլիսի հայերը, որքան էլ որ տարօրինակ է, հաջորդ օրը դիմեցին Օրդուբադի գավառապետ Աբաս Կուլի Թահիրովին, քաղաքի պարետ, թուրք կապիտան Էդիֆ բեյին՝ մահմեդական բնակչությունից Վ. Ագուլիսը պաշտպանելու խնդրանքով: Նույն օրը Վ. Ագուլիս ժամանեց Էդիֆ բեյը և, տեղավորվելով Արամ Տեր-Միքայելյանի տանը, դիմեց Նախիջևանում գտնվող Խալիլ բեյին՝ զորք ուղարկելու, բայց ստացավ բացասական պատասխան, թե Նախիջևանում անհիշխանություն է, և ինքը զորք չի կարող ուղարկել: Էդիֆ բեյը հայերին խոստացավ զորք բերել Բայազետից կամ անձամբ հայերին ուղեկցել մինչև սահմանագլուխ: Երեք-չորս օր անց Վ. Ագուլիսում սկսեց կուտակվել թաթարական խուժանը: Քաղաքի բնակիչները դիմեցին Էդիֆ բեյին և խնդրեցին հրամայել եկվոր թաթարներին հեռանալ: Նա թեպետ խոստացավ դա անել, սակայն խուժանի թիվն ավելի շատացավ: 1919 թ. դեկտեմբերի 24-ին Վ. Ագուլիս ժամանեցին Ա. Թահիրովը և տեղի հոգևոր շեյխը և տեղավորվեցին Տեր-Միքայելյանցի տանը: Նրանց ժամանումից մեկ ժամ հետո Վ. Ագուլիսի փողոցներում սկսվեց հայերի կոտորածը և հայկական թաղամասի հրդեհը: Շեյխը հայերին տեղափոխեց մահմեդական հատված և տեղավորեց մի քանի տներում: Հաջորդ օրը կեսօրին հրահանգ ստացվեց, թե հայերին պետք է տեղափոխել Չանանաբ, Ցղնա և որ նրանց ուղեկցելու է ոմն Սաթուր, որը հայտնի ավազակ էր: Այդ տեղեկությունից սարսափած հայ բնակչությունը կրկին դիմեց Էդիֆ բեյին, որ նա անձամբ ուղեկցի հայերին: Սակայն վերջինս թաքնվեց հայերից, իսկ միլիցիոներները սկսեցին հայերին մտրակներով դուրս հանել տներից և հանձնել կանոնավոր զորամասերին, որոնք երկու ժամում բոլորին կոտորեցին: Ալան-թալանի միջոցին Հ. Տեր-Անտոնյանին հաջողվել էր փախչել և հասնել Ցղնա, այնտեղից էլ Երևան[4]:

ՀՀ արտաքին գործերի նախարարության կազմած տեղեկագրի համաձայն, Ն. Ագուլիսում կոտորվել էր 700, իսկ Վ.Ագուլիսում՝1000 հայ բնակիչ[5]:

---

[1] Նույն տեղում, գ. 475, թ. 53 շրջ.:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, գ. 427, թթ. 72-73
[4] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 427, թթ. 72-73:
[5] Նույն տեղում, ֆ. 368, g. 1, գ. 5, թ. 105:

Գրականության մեջ երբեմն Ագուլիսների անկումը բացատրվում է Գեղվածորի դեպքերով: Մասնավորապես, Հ. Հախնազարյանը իր աշխատությունում հաճախ է կրկնում, որ եթե չլինեին Գեղվածորի դեպքերը, Ագուլիսները կանգուն կմնային[1]: Նույնն են ասել նաև Նախիջևանի թուրք-ադրբեջանական իշխանությունները: Պատասխանելով հայերի կոտորածները վերջ տալու մասին Զանգեզուրի՝ 1919թ. դեկտեմբերի 27-ի վերջնագրին՝ այսպես կոչված Հարավ-արևմտյան Ադրբեջանի (Նախիջևանի) գեներալ-նահանգապետը մեղքը բարդում էր Ողջիի և Կիգի-Դարասի գազազած փախստականների վրա[2]: Բնականաբար, այդ բացատրությունն անհեթեթ է, միանշանակորեն մերժելի: Թուրքերն ու թաթարները հայերի ջարդերը սկսել էին շատ ավելի շուտ և իրականացնում էին համատարած ձևով՝ անկախ հայերի պահվածքից:

Իսկ ինչպիսի՞ն էր ՀՀ կառավարության վերաբերմունքն այս ամենի նկատմամբ: Ագուլիսցիների կոտորածների կապակցությամբ ՀՀ կառավարությունը ընդամենը վճռական բողոքով դիմեց Դաշնակից պետությունների ներկայացուցիչներին և դեկտեմբերի 29-ի հեռագրով պահանջեց անհապաղ ձեռնարկել նոր միջոցներ արյունահեղությունների առաջն առնելու համար: Միաժամանակ նշվում էր, որ Նախիջևանը փաստորեն գտնվում է թուրք-թաթարների իշխանության ներքո և որ հայկական բնակչության կոտորածներն իրականացվել են թուրքական սպաների ղեկավարությամբ[3]: Սակայն, ինչպես միշտ, դաշնակիցները հայերին հուսադրում էին Փարիզի Հաշտության վեհաժողովի կողմից կայացվելիք արդարամիտ որոշումների հետ, կամ էլ պարզապես անտեսում, քանզի նրանց շահերը չէին ներդաշնակվում հայկական սպասելիքների հետ:

Հաջորդ օրը նույն բովանդակությամբ հեռագիր ուղարկվեց նաև Ադրբեջանի և Վրաստանի արտաքին գործերի նախարարներին, որտեղ Ադրբեջանի կառավարությունը մեղադրվում էր 1919 թ. նոյեմբերի 23-ի հայ-ադրբեջանական համաձայնագիրը խախտելու մեջ[4]: Ինչ վերաբերում է Շարուր-Նախիջևանում անձնատուր եղած հայ բնակչությանը և զինվորներին, ՀՀ կառավարությունը դեռևս 1919թ. նոյեմբերի 15-ին որոշել էր նրանց տեղափոխել Երևանի գավառ: Դեկտեմբերի 29-ին որոշվեց 50 հազար ռուբլի տրամադրել Ալիխան Մակինսկուն, որը հանձն էր առել մեկնել Շարուր և հայերին տեղափոխել, իսկ 1920 թ. փետրվարի 5-ին որոշվեց գերի թուրքերին փոխանակել Խանլուխլարի, Թազաքենդի, Աստապատի և Ագուլիսի հայ գերիների հետ[5]:

1920 թ. փետրվարին Ալիխան Մակինսկին և մի քանի այլ անձինք ամերիկացի գնդապետ Շելլի ղեկավարությամբ մեկնեցին Շարուր-Նախիջևան հայ գերիներին Հայաստան կամ Պարսկաստան տեղափոխելու համար: Նրանք իրենց հետ տանում էին մի քանի բեռնատար մեքենաների վրա 1500 փութ ալյուր, շաքար և այլ մթերքներ:

Սակայն այս առաքելությունը լրիվ ձախողվեց: Թուրքերը նրանց չթողեցին Նախիջևանի սահմանն անցնել, իսկ տրված մթերքներն ու գումարները բռնագրավեցին: Նրանք ձեռնունայն 1920 թ. մարտին վերադարձան Երևան՝ հայտնելով, որ գերիներին

---

[1] Հախնազարյան Հ., նշվ. աշխ., էջ 358:
[2] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 484, թ. 9:
[3] Նույն տեղում, գ. 282, թ. 182
[4] Նույն տեղում, թ. 184-185: Համաձայնագրի մասին տես գրքի հաջորդ ենթագլխում:
[5] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2, էջ 72:

չթողեցին բերել և մթերքներն էլ բաժանեցին տեղացի թուրքերին[1]: Այս մասին Շելլը զեկուցեց նաև գնդապետ Հասկելին:

Այսպիսով՝ Նախիջևանի թաթար բնակչության առաջնորդները, օգտվելով հայկական իշխանության և տեղի հայության թուլությունից և անվճռականությունից, և ստանալով Թուրքիայի ու Ադրբեջանի գործուն աջակցությունը, 1919 թ. հուլիսին կազմակերպեցին ապստամբություն և հայկական ուժերին դուրս մղեցին երկրամասի տարածքից՝ նախիջևանահայությանը երկրորդ անգամ ստիպելով բռնել գաղթի ճանապարհը:

Գողթանում իրադարձությունները ստացան այլ ընթացք: Հայկական այն գյուղերը, որոնք ապավինեցին իրենց ուժերին, դրսևորեցին համերաշխություն և կազմակերպված պաշտպանվեցին, փրկվեցին կոտորածից, իսկ մյուսները, ովքեր հանձնվեցին թշնամու ողորմածությանը՝ կոտորվեցին:

Կարելի է եզրահանգել, որ վերոնշյալ իրադարձություններում Անդրկովկասում Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները, չնայած որոշակի ակնկալիքներին առաջին աշխարհամարտում որպես Անտանտի փոքր Դաշնակցի Հայաստանի կողմից սպասվող աջակցության հույսերին, մասնավորապես տարածքային-սահմանազատման կարևոր հարցերում կամ պասիվ չեզոք դիրք գրավեցին կամ կողմնակալ, ադրբեջանամետ դիրքորոշում, որը նպաստեց Նախիջևանում, Գողթանում և այլուր մահմեդական խաների և մահմեդական զանգվածին հակահայկական-հակապետական խռովություններին ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ինչին նպաստեց անկայուն չեզոք գոտիների ստեղծումը, որոնցում հայկական կողմը ռեալ իշխանություն չունեցավ: Արդյունքում, այս երկակի քաղաքականությունը դաշնակիցների, և մասնավորապես բրիտանական ռազմաքաղաքական առաքելության կողմից հանգեցրեց ՀՀ դիրքերի թուլացմանը տարածաշրջանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Աշխատավոր», Երևան, 26 հուլիսի, 1919:
2. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2:
3. «Ժողովուրդ», 20 հոկտեմբերի, 1920:
4. «Ժողովուրդ», Երևան, 18 նոյեմբերի, 1919:
5. «Հառաջ», 26 նոյեմբերի, 1919:
6. «Հառաջ», 27 սեպտեմբերի, 1919:
7. Գաղտնի փաստաթղթերը:
8. Ձեյնադինը գտնվում էր Նախիջևան քաղաքից 7 կմ հարավ-արևելք,Նախիջևան գետի ձախակողմյան շրջանում:
9. Զոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները»:
10. Հ ԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 111:
11. Հ ԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 114:
12. Հ ԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 115:
13. Հ ԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 50, թթ. 12-14:
14. Հ ԱԱ, ֆ. 200. g. 1, գ. 358, թ. 36:

[1] Նույն տեղում:

15. Հ ԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 171, թ. 16.:
16. Հ ԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 171, թ. 23:
17. Հ ԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 171, թ. 28 շրջ.:
18. ՀԱԱ , ֆ. 201, g. 1, գ. 170, թթ. 19-20:
19. ՀԱԱ, ֆ. 119, g. 1, գ. 95, թ. 5;
20. ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 110, թ. 18:
21. ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 50, թ.108:
22. ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 95, թ. 1:
23. ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 95, թթ. 2-4:
24. ՀԱԱ, ֆ. 200, գ. 427, թթ. 72-73:
25. ՀԱԱ, ֆ. 200, գ. 475, թ. 53 շրջ.:
26. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 116:
27. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 117:
28. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 212, թ. 121:
29. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 266, թ. 34:
30. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 282, թ. 182:
31. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 427, թթ. 72-73:
32. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 484, թ. 21:
33. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 484, թ. 9:
34. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 50, թ. 378:
35. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 541, թթ. 58-59:
36. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, թ. 184-185:
37. ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 170, թ. 20:
38. ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 170, թթ. 22-23:
39. ՀԱԱ, ֆ. 205, g. 1, գ. 541, թ. 58:
40. ՀԱԱ, ֆ. 205, g. 1, գ. 780, թ. 485:
41. ՀԱԱ, ֆ. 222, g. 1, գ. 138, թ. 1:
42. ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 183, թ. 32:
43. ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 183, թ. 34:
44. ՀԱԱ, ֆ. 314, g. 1, գ. 41, թ. 11:
45. ՀԱԱ, ֆ. 368, g. 1, գ. 5, թ. 105:
46. Հախնազարյան Հ., Գողթան գավառ, Թեհրան, 1991:
47. Ղուլյան Յ., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից 1918-1920 թվականներ,
48. Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.):
49. Vanik Virabyan, Revealing The Khan Tekinsky Conspiracy (from the history of counter intelligence of the First Republic of Armenia), Fundamental Armenology, № 1 (13), 2021:
50. Кемаль М., Путь новой Турции, Соцэкгиз, М., 1929, т. 1.
51. Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920, Ер., Нац. Архив Армении, 2012:

REFERENCES

1. «Ashxatavor», Erevan, 26 hulisi, 1919. (in Armenian)
2. «Banber Hayastani arxivneri», 1993, t'iv 1-2. (in Armenian)
3. «Har'aj», 26 noyemberi, 1919. (in Armenian)
4. «Har'aj», 27 septemberi, 1919. (in Armenian)
5. «Jhoghovurd», 20 hoktemberi, 1920. (in Armenian)
6. «Jhoghovurd», Erevan, 18 noyemberi, 1919. (in Armenian)
7. Gaghtni p'astat'ght'ery'. (in Armenian)
8. Ghowlyan Y., Hayastan-Adrbejan haraberowt'yownneri patmowt'yownic 1918-1920 t'vakanner. (in Armenian)
9. H AA, f. 200, c. 1, g. 212, t'. 111:
10. H AA, f. 200, c. 1, g. 212, t'. 114:
11. H AA, f. 200, c. 1, g. 212, t'. 115:
12. H AA, f. 200. c. 1, g. 358, t'. 36:
13. H AA, f. 201, c. 1, g. 171, t'. 16.:
14. H AA, f. 201, c. 1, g. 171, t'. 23:
15. H AA, f. 201, c. 1, g. 171, t'. 28 shrj.:
16. HAA , f. 201, c. 1, g. 170, t't'. 19-20:
17. HAA, f. 119, c. 1, g. 95, t'. 5;
18. HAA, f. 199, c. 1, g. 110, t'. 18:
19. HAA, f. 199, c. 1, g. 50, t'.108:
20. HAA, f. 199, c. 1, g. 95, t'. 1:
21. HAA, f. 199, c. 1, g. 95, t't'. 2-4:
22. HAA, f. 200, g. 427, t't'. 72-73:
23. HAA, f. 200, c. 1, g. 212, t'. 116:
24. HAA, f. 200, c. 1, g. 212, t'. 117:
25. HAA, f. 200, c. 1, g. 212, t'. 121:
26. HAA, f. 200, c. 1, g. 266, t'. 34:
27. HAA, f. 200, c. 1, g. 282, t'. 182:
28. HAA, f. 200, c. 1, g. 427, t't'. 72-73:
29. HAA, f. 200, c. 1, g. 484, t'. 21:
30. HAA, f. 200, c. 1, g. 484, t'. 9:
31. HAA, f. 200, c. 1, g. 50, t'. 378:
32. HAA, f. 200, c. 1, g. 50, t't'. 12-14:
33. HAA, f. 200, c. 1, g. 541, t't'. 58-59:
34. HAA, f. 200, c. 1, t'. 184-185:
35. HAA, f. 200, g. 475, t'. 53 shrj.:
36. HAA, f. 201, c. 1, g. 170, t'. 20:
37. HAA, f. 201, c. 1, g. 170, t't'. 22-23:
38. HAA, f. 205, c. 1, g. 541, t'. 58:
39. HAA, f. 205, c. 1, g. 780, t'. 485:
40. HAA, f. 222, c. 1, g. 138, t'. 1:
41. HAA, f. 276, c. 1, g. 183, t'. 32:
42. HAA, f. 276, c. 1, g. 183, t'. 34:
43. HAA, f. 314, c. 1, g. 41, t'. 11:
44. HAA, f. 368, c. 1, g. 5, t'. 105:
45. Haxnazaryan H., Goght'an gavar', T'ehran, 1991. (in Armenian)
46. Kemal' M., Put' novoj Turcii, Socjekgiz, M., 1929, t. 1. (in Russian)

47. Tumanjan M., Diplomaticheskaja istorija Respubliki Armenija. 1918-1920, Er., Nac. Arhiv Armenii, 2012. (in Russian)
48. Vanik Virabyan, Revealing The Khan Tekinsky Conspiracy (from the history of counter intelligence of the First Republic of Armenia), Fundamental Armenology, № 1 (13), 2021:
49. Virabyan V., Haykakan hetaxowzowt'yowny' Ar'ajin Hanrapetowt'yan tarinerin (1918-1920 t't'.). (in Armenian)
50. Zeynadiny' gtnvum e'r Naxijevan qaghaqic 7 km harav-arevelq, Naxijevan geti d'axakoghmyan shrjanum. (in Armenian)
51. Zohrabyan E'., Naxijevani himnaharcy' ev Hayastani «Dashnakicnery'». (in Armenian)

РЕЗЮМЕ
АНТИАРМЯНСКИЕ БЕСПОРЯДКИ И ПОЗИЦИЯ СОЮЗНИКОВ. БОИ САМООБОРОНЫ ГОХТАНА

Еприкян Армине
Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, факультет истории и социальных наук, кафедра армянской истории
Кандидат исторических наук, доцент
Ереван, Республика Армения

Летом 1919 г. стремительные геополитические преобразования поставили перед Республикой Армения новые вызовы, обострились отношения с Азербайджаном. Азербайджан, используя все возможные средства, вел большую подготовительную работу по распространению своей власти на Зангезур и Нахичевань. Если движение, начатое татарами в Зангезуре, потерпело неудачу и было подавлено, то события в Шарур-Нахиджеване пошли по другому пути. Здесь с помощью турецкой и азербайджанской агентуры противник был более подготовлен и организован, чем армянское правительство и армянское население.

Власти РА, конечно, прибегали к мерам, но это были нерешительные, по большей части бесплодные шаги дипломатического характера, не особо поддержанные военно-политическими представительствами союзников. Британцы уже обратились в сторону Азербайджана и Грузии и не были особенно настроены сдерживать татар, в то время как подготовка татарского восстания в Нахиджеване шла с большим размахом.

Лидеры татарского населения Нахичевани, воспользовавшись слабостью и нерешительностью армянского правительства и местных армян и получив активную поддержку Турции и Азербайджана, в июле1919 г. организовали восстание и вытеснили армянские войска с территории, вынудив встать на путь миграции нахиджеванских армян.

В Гохтане события развивались иначе. Те армянские села, которые полагались на свои силы, проявили сплоченность и организованную оборону, были спасены от резни, а другие, сдавшиеся на милость врагу, подверглись уничтожнию.

В упомянутых выше событиях военно-политические представительства союзников в Закавказье, несмотря на определенные ожидания поддержки со стороны Армении как малого союзника Антанты в Первой мировой войне, особенно в важных вопросах территориального размежевания, заняли либо пассивно-нейтральную, либо предвзятую, проазербайджанскую позиция, что способствовало антиармянско-антигосударственным мятежам против Республики Армения со стороны мусульманских ханов и мусульманских масс в Нахичевани,

Гохтне и других местах. В результате такая двойная политика союзников, и в особенности английской военно-политической миссии, привела к ослаблению позиций РА в регионе.

Ключевые слова: Республика Армения, Нахичевань, Азербайджан, Великобритания, Гохтан, самооборона, союзники, обиды.

SUMMARY

ANTI-ARMENIAN RIOTS AND THE POSITION OF THE ALLIES. GOKHTAN SELF-DEFENSE BATTLES

Eprikyan Armine

Candidate of Historical Sciences, Associate Professor
Armenian State Pedagogical University after H. Abovyan,
Faculty of History and Social Sciences,
Department of Armenian History
Yerevan, Armenia

In the summer of 1919, the rapid geopolitical transformations faced new challenges to the Republic of Armenia, and relations with Azerbaijan worsened. Using all possible means, Azerbaijan conducted extensive preparatory work to spread its power over Zangezur and Nakhichevan. If the movement started by the Tatars in Zangezur failed and was crushed, the events in Sharur-Nakhijevan took a different course. With the help of Turkish and Azerbaijani agents, the enemy was more prepared and organized than the Armenian government and population.

The RA authorities, of course, resorted to measures. Still, they were indecisive, mostly non-perspective steps of a diplomatic nature, which were not particularly supported by the Allies' military and political representations. The British had already turned to Azerbaijan and Georgia and were not mainly determined to contain the Tatars, while the preparations for the Tatar uprising in Nakhijevan were in full swing. The leaders of the Tatar population of Nakhichevan, taking advantage of the weakness and indecisiveness of the Armenian government and the local Armenians, and receiving the active support of Turkey and Azerbaijan, organized an uprising in July 1919 and pushed the Armenian forces out of the territory, forcing the Nakhichevan Armenians to take the path of migration.

Events took a different direction in Goghtan. Those Armenian villages that relied on their own strength showed solidarity and organized defense and were saved from the massacre. In contrast, others who surrendered to the enemy's mercy were massacred.

In the events mentioned above, the military and political representations of the Allies in the Transcaucasus, despite certain expectations of support from Armenia as a small Ally of the Entente in the First World War, took either a passive, neutral position or a biased, pro-Azerbaijani position, particularly in the essential issues of territorial demarcation. This contributed to the anti-Armenian-anti-government riots against the Republic of Armenia by the Muslim khans and the Muslim masses in Nakhichevan, Goghtn, and elsewhere. As a result, this dual policy on the part of the allies, particularly the British military-political mission, weakened RA's position in the region.

Keywords: Republic of Armenia, Nakhichevan, Azerbaijan, Great Britain, Goghtan, self-defense, allies, resentments.